ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1954 Общественные науки

Վ. Պետրոսյան

ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աշխատանքը մի պրոցես է մարդու ու բնության միջև, որի ընթացքում մարդն իր գործունեությամբ վերափոխում և յուրացնում է բնության բարիքները։ Աշխատանքի պարզ պրոցեսի տեսակետից դիտած, արտադրողական աշխատանքը հանդես է գալիս որպես սպառողական արժեք արտադրող աշխատանք։ «Եթե ամբողջ պրոցեսը քննենք նրա հետևանքի— արդյունքի տեսակետից, ապա թե՛ աշխատանքի միջոցը և թե՛ աշխատանքի առարկան, երկուսն էլ հանդես են գալիս որպես արտադրամիջոցներ, իսկ ինքը աշխատանքը՝ որպես արտադրողական աշխատանք»[1]։

Աշխատանքը որպես այդպիսին, որպես մարդկային կյանքի պայման, հատուկ է արտադրության բոլոր եղանակներին։ Արտադրողական աշխատանքի արդյունքը՝ հասարակական պրոդուկտն է։ Հասարակական պրոդուկտը ստեղծվում է նյութական արտադրության ոլորտում։ Ոչ նյութական արտադրության ոլորտում հասարակական պրոդուկտ չի ստեղծվում։

Արտադրողական աշխատանքի արդյունքներն իրենց ճնշող մեծամասնությամբ հանդես են գալիս իրերի ձևով։ Սակայն աշխատանքի արդյունքների իրային ձևը չի սպառում արտադրողական աշխատանքի հատկացողությունը։ Գոյություն ունեն արտադրության առանձին ճյուղեր, որտեղ արտադրողական աշխատանքի արդյունքը նյութական նոր բարիք չի հանդիսանում։ Այդ ճյուղերին առաջին հերթին պատկանում է տրանսպորտային արդյունաբերությունը։ Միաժամանակ, ոչ նյութական արտադրության ոլորտի ճյուղերի արդյունքները հաճախ հանդես են գալիս իրերի ձևով, ինչպես, օրինակ, նկարը, քանդակը և այլն։ Այդ իսկ պատճառով արտադրողական աշխատանքի արդյունքների իրային ձևը չի կարող լինել արտադրողական և անարտադրողական աշխատանքի սահմանազատման չափանիշ։ Արտադրողական աշխատանքի չափանիշը մարդու և բնության հարաբերությունն է՝ նյութական բարիքների արտադրության պրոցեսում։

Ամեն մի հասարակարգում արտադրողական աշխատանքը հանդես է գալիս իր կոնկրետ ձևով, որի բովանդակությունը կանխորոշվում է արտադրության տվյալ եղանակի հիմնական տնտեսական օրենքով։ Հենց այդ պատճառով արտադրողական աշխատանքի որոշումը, որը ստացվում է աշխատանքի պարզ պրոցեսի տեսակետից՝ անբավարար է ինչպես արտադրության կապիտալիստական, այնպես էլ սոցիալիստական պրոցեսի համար։ «Արտադրողական աշխատանքի այդ սահմանումը, որ աշխատանքի պարզ պրոցեսի տեսակետից է ստացվում, բոլորովին բավական չէ արտադրության կապիտալիստական պրոցեսի համար»[2]։

---

1 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 1, էջ 192։
2 Նույն տեղում։

Արտադրողական աշխատանքի հասկացողությունը կապիտալիստական իմաստով, որպես տնտեսական կատեգորիա, իր մեջ ընդգրկում է նաև կապիտալիստական արտադրական հարաբերությունների կարևորագույն գծերը։ Կապիտալիստական հասարակարգում արտադրողական աշխատանքի հասկացողությունը արտահայտում է հավելյալ արժեքի արտադրությունը։ Արտադրության կապիտալիստական եղանակը հենվում է այդ տիպի արտադրողական աշխատանքի վրա։

Կապիտալիստական արտադրությունն, ըստ էության, հավելյալ արժեքի արտադրություն է։ Կապիտալիստը կազմակերպում է արտադրություն ոչ թե սպառողական արժեք, այլ հավելյալ արժեք արտադրելու համար։ Այդ պատճառով, կապիտալիստական իմաստով, արտադրողական աշխատանքը վարձու այն աշխատանքն է, որը փոխվում է փոփոխական կապիտալի հետ և ստեղծում հավելյալ արժեք։ Եթե աշխատանքը չի ստեղծում հավելյալ արժեք, անկախ նրա կոնկրետ արդյունքներից, կապիտալիստական իմաստով արտադրողական աշխատանք չի հանդիսանում։ Արտադրողական աշխատանքի հասկացողությունը կապիտալիստական իմաստով որոշվում է ոչ թե արտադրության պրոցեսի նյութական ձևով՝ աշխատանքի արդյունքով, այլ կապիտալիստական արտադրական հարաբերությունների հատուկ ձևով, որի ընթացքում տեղի է ունենում արտադրողական աշխատանքի պրոցեսը։ Աշխատանքի արդյունքների առարկայական ձևերի դանաղանությունը ոչ մի կապ չունի արտադրողական և անարտադրողական աշխատանքի միջև եղած տարբերության հետ։ Եթե կապիտալիստը դնում է աշխատուժը, կազմակերպում է արտադրություն և ստանում է շահույթ, այդ դեպքում աշխատանքը նրա համար արտադրողական է։ Եթե կապիտալիստը նույն բանվորի աշխատուժը դնում է որպես սպառող՝ իր անձնական կարիքները բավարարելու համար, ապա բանվորի աշխատանքն հանդիսանում է անարտադրողական։ Այսպիսով, կապիտալիստական հասարակարգում արտադրողական է միայն այն աշխատանքը, որն ստեղծում է հավելյալ արժեք։

Արտադրության կապիտալիստական եղանակը մի կողմից ընդլայնում է արտադրողական աշխատանքի հասկացողությունը, իսկ մյուս կողմից սահմանափակում է այն։ Արտադրության հանրայնացմանը զուգընթաց՝ դնալով ավելի մեծ թվով ու բազմազան պրոֆեսիաների բանվորներ են ներգրավվում կապիտալիստական արտադրության մեջ։ Բայց քանի որ արտադրության կապիտալիստական եղանակի նպատակն է հավելյալ արժեքը՝ արտադրողական է հանդիսանում միայն հավելյալ արժեք ստեղծող աշխատանքը։ Արտադրողական աշխատանքի հասկացողության այդ հակասությունն էլ ավելի է ուժեղանում մոնոպոլիստական կապիտալիզմի շրջանում։ Ժամանակակից կապիտալիզմը չի կարող բավարարվել միջին շահույթով և նույնիսկ գերշահույթով։ Իմպերիալիզմը պահանջում է կապիտալիստական առավելագույն շահույթը։ Կապիտալիստական առավելագույն շահույթը հանդիսանում է մոնոպոլիստական կապիտալիզմի շարժիչ ուժը. միայն կապիտալիստական առավելագույն շահույթի առկայության դեպքում կարող է տեղի ունենալ շատ թե քիչ կանոնավոր ընդլայնված վերարտադրություն։ Դա նշանակում է, որ կապիտալիզմն իր բարձրագույն ստադիայում կարող է հենվել միայն կապիտալիստական առավելագույն շահույթի արտադրության վրա։ Կապիտալիստական առավելագույն շահույթը ստեղծվում է ավելի բազ-

մաղան պրոֆեսիաների բանվորների աշխատանքով։ Բայց, քանի որ ժամանակակից կապիտալիզմի նպատակը հանդիսանում է կապիտալիստական առավելագույն շահույթի արտադրությունը, ապա արտադրողական աշխատանքի հասկացողությունը սահմանափակվում է, արտադրողական է հաշվվում միայն կապիտալիստական առավելագույն շահույթ ստեղծող աշխատանքը։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ կապիտալիստական առավելագույն շահույթի արտադրությունը որպես արտադրողական աշխատանքի չափանիշ, չի կարելի կիրառել կապիտալիստական ձեռնարկություններում զբաղված բոլոր բանվորների նկատմամբ. առհասարակ, կապիտալիզմի պայմաններում, ամեն մի ընդհանուր օրենք գործում է վերին աստիճանի այլակերպված ու մոտավոր ձևով։

Այսպիսով, արտադրողական աշխատանքի հասկացողությունը կապիտալիստական իմաստով իր մեջ ընդգրկում է 1) Հավելյալ արժեքի արտադրությունը. 2) Նյութական բարիքների արտադրությունը, որպես հավելյալ արժեքի արտադրության պայման։ Ընդորում, արտադրողական աշխատանքի գլխավոր հատկանշական դիծը կապիտալիզմի պայմաններում հանդիսանում է հավելյալ արժեքի արտադրությունը։ «Քանի որ կապիտալիստական արտադրության անմիջական նպատակը և բուն արդյունքը հավելյալ արժեքն է, ապա միայն այն աշխատանքն է արտադրողական, որն ստեղծում է անմիջական հավելյալ արժեք...[1]»։ Այդ նշանակում է, որ արտադրողական աշխատանքի հասկացողությունը բնորոշելիս անհրաժեշտ է ելնել արտադրության տվյալ եղանակի նպատակից ու հիմնական տնտեսական օրենքից։ Արտադրողական աշխատանքի չափանիշը կապիտալիստական և սոցիալիստական հասարակարգում կարող է լինել միայն արտադրության նպատակը։ Եթե աշխատանքը որպես այդպիսին համապատասխանում է արտադրության նպատակին, ապա նա տվյալ հասարակարգի պայմաններում հանդիսանում է արտադրողական աշխատանք և ընդհակառակը։

Սոցիալիստական հասարակարգում արտադրողական աշխատանքը ձեռք է բերում նոր բնորոշ գծեր, որոնք հատուկ են միայն արտադրության սոցիալիստական եղանակին։ Անկախ դրանից, սոցիալիստական արտադրությունը նույնպես բաժանվում է նյութական և ոչ նյութական արտադրության ոլորտների, իսկ աշխատանքը՝ արտադրողականի ու անարտադրողականի։ Սակայն ՍՍՌՄ-ում ամբողջ աշխատանքը հանդես է գալիս անհրաժեշտ աշխատանքի ձևով։ Բայց չի կարելի շփոթել անհրաժեշտ և արտադրողական աշխատանքը. դրանք միանգամայն տարբեր բաներ են։

Սոցիալիզմի հաղթանակով արմատականորեն փոխվում է հասարակական արտադրության ոլորտների հարաբերությունը։ Դնալով ավելանում է արտադրողական աշխատանքով զբաղվողների թիվը։ Դրան հակառակ, կապիտալիստական երկրներում անընդհատ աճում է անարտադրողական աշխատանքով զբաղվողների թիվը. ուռճանում են զինված ուժերը, ոստիկան ապարատը և այլն։ ԱՄՆ-ում, եթե անարտադրողական աշխատանքով զբաղվածների տեսակարար կշիռը ամբողջ աշխատունակ բնակչության թվի մեջ 1910 թ. կազմում էր 24,9 տոկոս, ապա 1920թ.՝ 27,9 տոկոս, 1930թ.՝ 34,4 տոկոս

[1] Архив Маркса и Энгельса, том II (VII), стр. 127.

և 1950 թ.՝ 42 տոկոս։ Այդ նույն բանի մասին է խոսում նաև ռազմական ծախսերի տեսակարար կշռի ավելացումը կապիտալիստական երկրների ազգային եկամուտում։ Եթե ռազմական ծախսերի տեսակարար կշիռը ԱՄՆ-ի ազգային եկամուտում 1937-38 բյուջետային տարում կազմում էր 1,5 տոկոս, ապա 1952—53 բյուջետային տարում ավելի քան 21,0 տոկոսը։ Արտադրողական աշխատանքով զբաղվածների տեսակարար կշռի կրճատումը ուղեկցվում է շահագործման նորմայի չտեսնված աճով։ ԱՄՆ-ում շահագործման նորման 1947—1950 թթ. ընթացքում աճել է ավելի քան 73 տոկոսով։ Դրա հետևանքով, չնայած արտադրողական աշխատանքով զբաղվածների թվի տեսակարար կշռի ու բացարձակ թվի կրճատմանը՝ կապիտալիստական մոնոպոլիաների շահույթներն աճում են անհավի չափերով և շատ անգամ գերազանցում են բնակչության ավելացման տեմպերին։ Այսպես, եթե ԱՄՆ-ում 1938—1949 թթ. բնակչությունն աճել է 15 տոկոսով, ապա կապիտալիստների շահույթները՝ 8,2 անգամ։

Սոցիալիզմի պայմաններում ոչ նյութական արտադրության ոլորտում կատարվող աշխատանքը ակտիվորեն նպաստում է ազգային եկամուտի աճին։ Անվիճելի է այն դրույթը, որի համաձայն որքան բարձր է բանվորների տեխնիկական ու կուլտուրական մակարդակը, այնքան բարձր է աշխատանքի արտադրողականությունը, այնքան շատ նյութական բարիքներ են արտադրվում։

Սոցիալիստական հասարակարգում արտադրողական աշխատանքի բնույթը կարելի է հասկանալ՝ ելնելով միայն սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքից։ Սոցիալիստական արտադրության նպատակը հասարակության անդամների նյութական ու կուլտուրական պահանջմունքների առավելագույն բավարարումն է։ Այդ իսկ պատճառով ՍՍՌՄ-ում արտադրողական աշխատանքի հասկացողությունն իր մեջ ընդգրկում է 1) արտադրության սոցիալիստական եղանակի նպատակը և 2) նյութական բարիքների արտադրությունը։ Սոցիալիստական հասարակարգում արտադրողական աշխատանքը՝ նյութական արտադրության ոլորտում կատարվող այն աշխատանքն է, որն ապահովում է հասարակության անդամների անընդհատ աճող նյութական ու կուլտուրական պահանջմունքների առավելագույն բավարարումը, այն աշխատանքն է, որի վրա հենվում և օրեց-օր զարգանում է արտադրության սոցիալիստական եղանակը։

ՍՍՌՄ-ում հասարակության ինչպես նյութական, այնպես էլ կուլտուրական պահանջմունքների բավարարումը հնարավոր է ապահովել միայն սոցիալիստական արտադրության՝ նյութական արտադրության անընդհատ զարգացման ու նորագույն տեխնիկայի բազայի վրա կատարելագործման միջոցով։ Որքան շատ է ազգային եկամուտը ինչպես և նրա մասը զուտ եկամուտը, այնքան մեծ են հասարակության անդամների անընդհատ աճող նյութական ու կուլտուրական պահանջմունքների բավարարման հնարավորությունները։

* * *

Զանազանվում է արտադրողական աշխատանքի երկու հասկացողություն. աշխատանքը որպես սպառողական արժեք արտադրող և արտադրողական աշխատանքը տարբեր հասարակարգերում։ Ինչպես կապիտալիստական, այն-

պես էլ սոցիալիստական հասարակարգում արտադրողական աշխատանքի տափանիշը արտադրության նպատակն է։ Արտադրող աշխատանքի որոշումը մատնացույց է անում, թե տարբեր հասարակարգերում հանուն ինչի է կատարվում աշխատանքը, հանուն կապիտալիստական առավելագույն շահույթի, թե՞ հանուն հասարակության անդամների նյութական ու կուլտուրական պահանջմունքների առավելագույն բավարարման։ Արտադրողական աշխատանքի նպատակը մյուս գործոնների հետ միասին կանխորոշում է աշխատանքի արտադրողականության մակարդակը տարբեր հասարակարգերում։